

021503.02.6 «ՌԵԺԻՍՈՒՐԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտն ստանում է արվեստի բակալավրի որակավորում: Դիմորդը պետք է օժտված լինի վառ ստեղծագործական երևակայությամբ և բեմական արտահայտչաձևերի բազմերանգությամբ: Մեծ նշանակություն ունեն դիմորդի դերասանական և երաժշտական, ինչպես նաև կազմակերպչական ունակությունները, ինքնուրույն մտածելակերպը: Ցանկալի է, որ դիմորդն ունենա գեղարվեստական ինքնագործունեությունում աշխատելու փորձ:

Դիմորդը մասնագիտական բանավոր քննություն է հանձնում «**Ղերասանի վարպետություն**» առարկայից: Քննության ընթացքում դիմորդն իր ընտրությամբ ներկայացնում է՝

- ✓ **Էտյուդ**՝ կյանքից վերցրած մի փոքր դրվագ՝ համապատասխան վերաբերմունքով
- ✓ **արտասանում** է գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ բանաստեղծություն, առակ, հատված արձակ գործից կամ որևէ մենախոսություն
- ✓ **ստուգվում են** նաև դիմորդի երաժշտական լսողությունը և ռիթմի ունակությունները:

Դիմորդին կարող են հանպատրաստից հանձնարարվել նաև գործնական այլ առաջադրանքներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-7 միավոր՝ երբ դիմորդի բեմական խոսքը կամ դերասանական էտյուդը թերարժեք են, կատարման առումով անհետաքրքիր, դժգույն և կեղծ: Երաժշտական (ռիթմիկայի) վարժությունները փաստում են, որ նա զուրկ է երաժշտական լսողությունից և ռիթմի զգացումից:

8-12 միավոր՝ երբ դիմորդը ներկայացնում է միջակ արտահայտչամիջոցներ. որոշ չափով ընկալում է կարդացած նյութը և բավարարում է «Բեմական խոսք» առարկայի համար պահանջվող միջին մակարդակը: Ներկայացրած դերասանական էտյուդից երևում է, որ նա զուրկ չէ ռեժիսորական մտածելակերպից և աշխատում է լինել ճշմարիտ իր ստեղծագործական խնդիրների մեջ:

13-17 միավոր՝ երբ դիմորդի արտասանությունն արտահայտիչ է, իմաստավորված, հասկանում է կարդացած նյութի իմաստը: Ներկայացրած էտյուդը համոզիչ է, հետաքրքիր մտածելակերպով և մատուցմամբ: Ունի երաժշտական որոշ ունակություններ: Հանձնաժողովի կողմից առաջարկված լրացուցիչ

վարժությունների ժամանակ կարողանում է կենտրոնանալ և հնարավորինս ընկալել այն ու կատարել:

18-20 միավոր` երբ դիմորդի ներկայացրած ծրագիրը լիարժեք բավարարում է առաջարկված պահանջները, կատարողական առումով հետաքրքրական է, ցայտուն, հարուստ բեմական արտահայտչամիջոցներով: Օժտված է վառ ստեղծագործական երևակայությամբ ու ճաշակով: Շնորհաշատ է ռիթմի և երաժշտության առումով, առաջարկված լրացուցիչ վարժությունները կատարում է արտահայտիչ ու համոզիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ.Հախվերդյան - Հայ թատրոնի պատմություն, Ե., 1980
2. Կ.Ստանիսլավսկի - Դերասանի և բեմադրիչի արվեստ (Նախաբան, «Արհեստ» և «Էթիկա» գլուխները), Ե., 1981: